Համաձայն «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
Վարչության 25.07.2019 թվականի որոշման
Գործում է 31.07.2019 թվականից

# ″ABB – ԱՎՏՈ″
# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Տրանսպորտային միջոցի ձեռք բերման նպատակով ֆիզիկական անձանց տրամադրվող վարկերի պայմաններն ու սակագները (սեփական ռեսուրսներով)

| | | **ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ և ավտոսրահներից ՆՈՐ տրանսպորտային միջոցի (ՏՄ) ձեռք բերման նպատակով վարկեր** | | | |
|---|---|---|---|---|---|
| | | **Խումբ 1** | **Խումբ 2** | **Խումբ 3** | **Խումբ 4** |
| | | Եվրոպական, Ամերիկյան, Ճապոնական և Հարավկորեական ՏՄ | Ռուսական Արտադրության ՏՄ | Այլ երկրների արտադրության ՏՄ | Արտերկրից ՏՄ-ի ներկրում |
| **1.** | **Վարկի պայմաններ** | | | | |
| 1.1 | Արժույթ | ՀՀ դրամ | | | |
| 1.2 | Տարեկան անվանական տոկոսադրույք | 15% | 15% | 15% | 17% |
| | | Եթե վարկառուն հանդիսանում է ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ քարտապան և միաժամանակ առնվազն 3 ամիս աշխատավարձը ստանում է ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ վճարային քարտով, ապա տոկոսադրույքը նվազեցվում է 1%-ով: | | | |
| 1.3 | Տարեկան փաստացի տոկոսադրույք | 17.8-21.7% | 18.4-24 % | 20.8-21.7% | 20.3-23.5% |
| 1.4 | Տրանսպորտային միջոցի ձեռք բերման կանխավճար | • Ավտոսրահից ձեռքբերվող ՏՄ-ի համար՝ նվազագույնը ՏՄ-ի արժեքի 20%<br>• մինչև 7 տարվա արտադրության ՏՄ-ի համար՝ նվազագույնը ՏՄ-ի արժեքի 30%, | • Ավտոսրահից ձեռքբերվող ՏՄ-ի համար՝ նվազագույնը ավտոմեքենայի արժեքի 30%<br>• Մինչև 5 տարվա արտադրության ՏՄ-ի համար՝ նվազագույնը ավտոմեքենայի արժեքի 50% | նվազագույնը ավտոմեքենայի արժեքի 50% | նվազագույնը ՏՄ-ի հաշիվ ապրանքագրի արժեքի 35%-ի չափով գումարի սառեցում Հաճախորդի բանկային հաշվին (մաքսազերծման գումար) |
| 1.5 | Վարկ/գրավ առավելագույն հարաբերակցություն՝ հիմք ընդունելով շուկայական արժեքը, իսկ Ավտոսրահից ձեռքբերվող ՏՄ-ի համար՝ ՏՄ-ի հաշիվ ապրանքագրի արժեքը | • Ավտոսրահից ձեռքբերվող ՏՄ-ի համար՝ 80%<br>• մինչև 7 տարվա արտադրության ՏՄ-ի համար՝ 70% | • Ավտոսրահից ձեռքբերվող ՏՄ-ի համար՝ 70%<br>• Մինչև 5 տարվա արտադրության ՏՄ-ի համար՝ 50% | 50% | Չի սահմանվում, քանի որ ՏՄ-ն գրավի առարկա կարող է հանդիսանալ ներկրումից հետո: Վարկի գումարը չի կարող գերազանցել ՏՄ-ի հաշիվ ապրանքագրի արժեքը և չի կարող գերազանցել նախօրոք հաստատված սահմանաչափը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1.6 | Ժամկետ | մինչև ձեռքբերվող ՏՄ-ի արտադրության ժամկետի 120 ամիսը լրանալը | մինչև ձեռքբերվող ՏՄ-ի արտադրության ժամկետի 84 ամիսը լրանալը | 36 ամիս | համաձայն խումբ 1, խումբ 2, խումբ 3 պայմանների |
| 1.7 | Մարման եղանակ | Ըստ հաճախորդի ընտրության՝<br>• անուիտետային վճարումներ,<br>• վարկի գումարի ամենամսյա հավասարաչափ մարում և հաշվեգրված տոկոսների ամենամսյա մարում | | | |
| 1.8 | Վարկի նվազագույն գումար | 500,000 ՀՀ դրամ | | | 2,500,000 ՀՀ դրամ |
| 1.9 | Վարկի առավելագույն գումար | 20,000,000 ՀՀ դրամ | | | 15,000,000 ՀՀ դրամ |
| 1.10 | Վարկի տրամադրման եղանակ | Միանվագ, անկանխիկ | | | Միանվագ, Անկանխիկ. փոխանցվում է վաճառող ընկերությանը՝ համաձայն հաշիվ ապրանքագրի:<br><br>Ձեռքբերման գումարի փոխանցման ծախսերը հոգում է հաճախորդը: |
| 1.11 | Վարկի վաղաժամկետ մարում | Թույլատրվում է,<br>Տույժեր և տուգանքներ չկան | | | |
| **2.** | **Միջնորդավճարներ** | | | | |
| 2.1 | Դիմում-հայտի ուսումնասիրության միանվագ միջնորդավճար | 5,000 ՀՀ դրամ | | | |
| 2.2 | Վարկի սպասարկման միանվագ միջնորդավճար (գանձվում է տրամադրման պահին) | Վարկի պայմանագրի գումարի 3% | | | |
| 2.3 | Վարկի սպասարկման ամսական միջնորդավճար | Վարկի պայմանագրի գումարի 0% | | | |
| 2.4 | Բանկային հաշիվների բացում/վարում (միանվագ) | համաձայն Բանկում գործող սակագների | | | |
| **3.** | **Ապահովվածություն** | | | | |
| 3.1 | Ապահովման միջոց | Ձեռք բերվող տրանսպորտային միջոց | | | *2 անձի երաշխավորություն և ձեռքբերվող ՏՄ-ի ներմուծումից և հաշվառումից հետո 15 օրյա ժամկետում գրավադրում |
| 3.2 | Տրանսպորտային միջոցի արտադրության ժամկետը | 7 տարի | 5 տարի | 3 տարի | համաձայն խումբ 1, խումբ 2, խումբ 3 պայմանների |
| 3.3 | Գրավի առարկային ներկայացվող պահանջներ | • Գրավի առարկա կարող են հանդիսանալ մինչև 8 նստատեղ ունեցող մարդատար տրանսպորտային միջոցները<br>• Գրավի առարկա չեն կարող հանդիսանալ որպես տաքսի և երթուղային տաքսի շահագործվող տրանսպորտային միջոցները<br>• Տեղական շուկայից ձեռքբերվող ՏՄ-ն չի կարող հանդիսանա գրավի առարկա, եթե տվյալ մեքենայի սեփականության իրավունքը ծագել է վարկային հայտ ներկայացնելուն նախորդող 3 ամսվա ընթացքում: | | | |

| | | | |
|---|---|---|---|
| **4.** | **Գրավի գնահատում և ապահովագրություն** | | |
| 4.1 | Գրավի արժեքի գնահատում | • Գնահատումը պետք է իրականացվի Բանկի հետ համագործակցող անկախ գնահատող ընկերության կողմից:<br>• Համագործակցության պայմանագրերի շրջանակներում նոր տրանսպորտային միջոցի ձեռք բերման դեպքում գրավի գնահատում չի պահանջվում: | չի կիրառվում |
| 4.2 | Ապահովագրություն | Գրավադրվող գույքի Կասկո ապահովագրումը իրականացվում է տարեկան կտրվածքով, բացառապես Բանկի հետ համագործակցող Ընկերությունների կողմից: Ապահովագրական գումարը հաշվարկվում է Վարկի գումարի մնացորդի նկատմամբ. | ներմուծումից հետո 15 օրացուցային օրվա ժամկետում |
| | | **Վարկառուն պարտավոր է ապահովել ապահովագրությունների անընդհատությունը վարկային պայմանագրի գործողության ողջ ընթացքում: Եթե Վարկառուն չի կատարում ապահովագրության հետ կապված նշված պահանջը ապա վարկի տարեկան անվանական տոկոսադրույքն ավելացվում է 2%-ով:** | |
| | **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԱՅՍ ՎԱՐԿԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՓՈՓՈԽՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ:** | | |
| **5.** | **Վարկառուին/ Համավարկառուին և Երաշխավորին ներկայացվող պահանջներ** | | |
| 5.1 | Վարկառու | 21-63 տարեկան ՀՀ կամ ԱՀ գրանցում ունեցող ռեզիդենտ ֆիզիկական անձ | |
| 5.2 | Համավարկառու | Վարկառուի հետ համապարտ պատասխանատվություն կրող 21-63 տարեկան ՀՀ կամ ԱՀ գրանցում ունեցող ռեզիդենտ ֆիզիկական անձ, ում պարտականությունը ծագում է վարկային պայմանագիրը կնքելու պահից :<br>Համավարկառուների քանակը չի կարող գերազանցել 2-ը: | |
| 5.3 | Երաշխավոր | Արտերկրից ՏՄ-ի ներկրման դեպքում՝ 2 ֆիզիկական անձի երաշխավորություն<br>✓ 1-ին Երաշխավոր՝ ՀՀ քաղաքացի և եկամտի առկայությամբ՝ համաձայն 5.4 կետի<br>✓ 2-րդ Երաշխավոր՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող անշարժ գույքի առկայությամբ՝ բնակելի տուն, բնակարան, հասարակական տարածք, արտադրատարածք | |
| 5.4 | Վարկառուի/ Համավարկառուի և Երաշխավորի եկամուտներ | • Առաջնային եկամուտներ (պարտադիր)** – հաշվի է առնվում 100%-ի չափով,<br>• Երկրորդային եկամուտներ (ոչ պարտադիր)*** - հաշվի են առնվում առավելագույնը 60%-ի չափով<br><br>Երաշխավորի դեպքում երաշխավորի եկամուտը/ները պետք է փոքր չլինեն վարկի գծով ամսական վճարների (մայր գումար+տոկոսագումար) 130%-ից | |
| 5.5 | Վարկառուի / Համավարկառուի և Երաշխավորի վարկային պատմությանը ներկայացվող պահանջներ | • Վարկի տրամադրման որոշումը կայացնելու պահին Գործող վարկային պարտավորությունները չպետք է լինեն ժամկետանց կամ դասակարգված որպես չաշխատող,<br>• Վերջին 12 ամիսների բոլոր (մարված և գործող) վարկերի ժամկետանց օրերի գումարային քանակը չպետք է գերազանցի 30 օրացուցային օրը: | |
| **6.** | **Լրացուցիչ պայմաններ** | | |
| 6.1 | Դիմում-հայտի մերժումը | • Հաճախորդի/Համավարկառուի/Երաշխավորի կողմից չեն ներկայացվել Վարկ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթեր:<br>• «ԱՔՌԱ» վարկային բյուրո հարցման արդյունքում պարզվել է, որ Հաճախորդը (առկայության դեպքում նաև Համավարկառուները) ունի բացասական վարկային պատմություն:<br>• Վարկունակության գնահատման արդյունքում պարզվել է, որ հաճախորդը վարկունակ չէ:<br>• Վարկավորման գործընթացի արդյունքում հայտնի է դարձել հաճախորդի/համավարկառուի վերաբերյալ այնպիսի տեղեկություն, որը կասկածի տակ է դնում հաճախորդի կողմից ներկայացված տեղեկությունը կամ վարկի վերադարձելիությունը: | |
| 6.2 | **Վարկառուի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում** | • ***Ժամկետանց տոկոսների գծով Բանկը Վարկառուից գանձում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար ժամկետանց գումարի 0,13%-ի չափով,***<br>• ***Ժամկետանց պարտավորությունները կատարելու դեպքում՝ մարումները իրականացվում են հետևյալ հերթականությամբ՝***<br>***1) Տույժ/տուգանքներ***<br>***2) Տոկոսագումարներ***<br>***3) Մայր գումար*** | |

| | | |
|---|---|---|
| | | • ***Վարկը պայմանագրով նախատեսված ժամկետներում չմարվելու դեպքում պայմանագրով նախատեսված տոկոսների հաշվարկը դադարում է և այդ օրվանից ժամկետանց գումարի նկատմամբ մինչև ժամկետանց պարտքի փաստացի կատարման օրը հաշվարկվում են տոկոսներ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով*** |
| | | *ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՏՈՒՆ ՄԻՆՉԵՎ 7 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՎԱՐԿԱՌՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:*<br>ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵԶ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ: |
| | | **Բանկն իրավունք ունի առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածել կամ իրացնել այն:** |
| | | **Գրավադրված տրանսպորտային միջոցի վրա բռնագանձում տարածելու դեպքում իրացումից ստացված գումարի հաշվին գրավով ապահովված պահանջն ամբողջությամբ չբավարարվելու դեպքում տարբերությունը բռնագանձվում է վարկառուի այլ գույքից:** |
| 6.3 | Տոկոսագումարների հաշվարկման կարգ | Տոկոսադրույքը կիրառվում է վարկի նվազող մնացորդի նկատմամբ |
| 6.4 | *Հաճախորդի այլ ծախսեր* | ✓ ***Գրավի գնահատման հետ կապված ծախսեր՝ 7,000-12,000 ՀՀ դրամ (Համագործակցության պայմանագրի շրջանակներում նոր տրանսպորտային միջոցների ձեռք բերման և արտերկրից տրանսպորտային միջոցի ներկրման վարկավորման դեպքում չի պահանջվում)***<br>✓ ***Ավտոմեքենայի գրանցման և ձևակերպման հետ կապված ծախսեր՝ 24,000-28,000 ՀՀ դրամ***<br>✓ ***Սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք ՃՈ-ից՝ 5,000 ՀՀ դրամ***<br>✓ ***Նոտարական վավերացման ծախսեր (նոր տրանսպորտային միջոցի ձեռքբերման դեպքում գործարքի նոտարական վավերացում չի պահանջվում)՝ 13,000-20,000 ՀՀ դրամ***<br>✓ ***Գրավի իրավունքի գրանցման հետ կապված ծախսեր՝ 8,000 ՀՀ դրամ***<br>✓ ***Տարեկան ապահովագրավճար - վարկի գումարի մնացորդի՝ 2,5%-2,75% տարեկան*** |
| 6.5 | Վարկային հայտի ուսումնասիրության ժամկետ | բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո 1 աշխատանքային օր |
| 6.6 | Վարկի ձևակերպման վայր | Բանկի Գլխամասային գրասենյակում և բոլոր մասնաճյուղերում (բացառությամբ Արարատյան և Արշակունի մասնաճյուղերի) |
| 6.7 | Բանկի համար ընդունելի ներկրման երկրներ /4-րդ խումբ/ | ԱՄՆ, Ճապոնիա և Ռուսաստանի Դաշնություն<br>Ընդ որում անհրաժեշտ պայման է, որպեսզի ներկրվող ավտոմեքենան ձեռքբերվի իրավաբանական անձից:<br>Ռուսաստանի Դաշնությունից ներկրվող ավտոմեքենաները պետք է լինեն բացառապես նոր (ավտոսրահից) ձեռքբերվող, որոնց կանխավճարի չափը կկիրառվի համաձայն խումբ 1,2,3: |
| 6.9 | ** Որպես առաջնային եկամուտ ընդունվում է.<br>- աշխատանքի վայրից ներկայացված տեղեկանքով հաստատված եկամուտը, ընդ որում Վարկառուն առնվազն երեք ամիս պետք է հանդիսանա տվյալ կազմակերպության աշխատակից,<br>- կենսաթոշակները՝ հաստատված լիազոր մարմնից ներկայացված տեղեկանքով:<br>*** Որպես երկրորդային եկամուտ ընդունվում է.<br>- վարձակալությունից ստացված եկամուտները, որոնք ամրագրված են վարձակալության պայմանագրով՝ հաստատված նոտարի կողմից և գրանցված Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից, ընդ որում՝ վարձակալության պայմանագիրը պետք է կնքված լինի ոչ պակաս, քան վարկային հայտ ներկայացնելու պահից երեք ամիս առաջ (բացառությամբ վարձակալության պայմանագրի վերակնքման դեպքերի), պայմանագիրը պետք է լինի առնվազն մեկ տարի ժամկետով:<br>- բանկում ներդրված ավանդային պայմանագրի համաձայն ստացվելիք տոկոսագումարները, ընդ որում՝ ավանդային պայմանագիրը պետք է կնքված լինի ոչ պակաս, քան վարկային հայտ ներկայացնելու պահից երեք ամիս առաջ, պայմանագիրը պետք է լինի առնվազն մեկ տարի ժամկետով: Երկարաձգված ավանդային պայմանագրերը հաշվարկվում են ներդրման պահից: Երկարաձգված են համարվում նաև այն պայմանագրերը, որոնք նախկինում նույն բանկում ունեցել են նույն գումարի չափով կնքված պայմանագիր և ակնհայտ է որ պայմանագիրը երկարաձգելու փոխարեն կնքվել է նոր պայմանագիր: | |

| | |
|---|---|
| | - վերջին 12 ամսվա ընթացքում պարբերաբար ստացված դրամական փոխանցումները,<br>- վճարովի ծառայությունների մատուցումից ստացված եկամուտներ, շահաբաժիններ և փաստաթղթերով հիմնավորված այլ եկամուտներ: |
| 7.0 | Վարկի ձևակերպման համար անհրաժեշտ փաստաթղթեր |

| *Նախնական փաստաթղթեր* | Հաճախորդից պահանջվող | Համավարկառուից պահանջվող | Երաշխավորից պահանջվող |
|---|---|---|---|
| Անձը հաստատող փաստաթուղթ /անձնագիր կամ նույնականացման քարտ/ | ✓ | ✓ | ✓ |
| Սոցիալական քարտ կամ հանրային ծառայության համարանիշ, բացակայության դեպքում՝ տեղեկանք համապատասխան մարմնից / | ✓ | ✓ | ✓ |
| Զբաղվածության և եկամուտների մասին տեղեկանք՝ գործատուի պաշտոնական բլանկի վրա տված, որտեղ նկարագրված կլինի տվյալ ընկերությունում զբաղեցրած պաշտոնի, հիմնական աշխատանքային ստաժի և ամսական աշխատավարձի չափի վերաբերյալ տեղեկատվություն | ✓ | ✓ | ✓ |
| Ընտանեկան վիճակը հաստատող փաստաթղթերի /ամուսնության վկայական, ամուսնության պայմանագիր, ամուսնալուծության վկայական և այլն/ պատճենները (առկայության դեպքում)՝ վարկառու | ✓ | - | - |
| Երկրորդական եկամուտը հիմնավորող փաստաթղթեր (առկայության դեպքում)՝ վարկառու, երաշխավոր, համավարկառու | ✓ | ✓ | ✓ |
| Եթե ՏՄ ձեռք է բերվում ավտոսրահից՝ տեղեկանք ավտոսրահից տրանսպորտային միջոց ձեռք բերելու դեպքում | ✓ | - | - |
| Եթե ՏՄ ներմուծվում է արտերկրից՝ ՏՄ ձեռքբերման համար դուրսգրված հաշիվ ապրանքագիր | ✓ | | |
| Տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի վկայականը (չի տարածվում երբ ՏՄ ներկրվում է արտերկրից) | ✓ | - | - |
| Տրանսպորտային միջոցի ժամանակավոր և հիմնական գրանցման վկայագրերը (չի տարածվում երբ ՏՄ ներկրվում է արտերկրից) | ✓ | - | - |
| Տրանսպորտային միջոցի վաճառողի անձը հաստատող փաստաթղթի, ՀԾՀ և ամուսնության վկայականի պատճենները (երկրորդային շուկայից ձեռքբերման դեպքում) | ✓ | - | - |
| Տրանսպորտային միջոցի (բացի ավտոսրահից նոր և արտերկրից ներկրվող տրանսպորտային միջոցների ձեռք բերման վարկավորման դեպքում) գնահատման ակտ | ✓ | - | - |
| ***Վարկի տրամադրման որոշում կայացնելուց հետո պահանջվող փաստաթղթեր*** | | | |
| Տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագիր (ավտոսրահից նոր տրանսպորտային միջոցների ձեռք բերման վարկավորման դեպքում) | ✓ | - | - |
| Տեղեկանք տրված իրավասու մարմնի կողմից Տրանսպորտային միջոցների սահմանափակումների վերաբերյալ (բացի ավտոսրահից նոր տրանսպորտային միջոցների ձեռք բերման դեպքում) | ✓ | - | - |
| Կանխավճարի անդորրագիրը / նախավճարի պայմանագիրը՝ հաստատված նոտարի կողմից | ✓ | - | - |
| Գրավի իրավունքի գրանցման վկայագիր (եթե ՏՄ ներկրվում է արտերկրից, ներկայացվում է ձևակերպումից հետո) | ✓ | - | - |
| Ապահովագրական պայմանագրերը (եթե ՏՄ ներկրվում է արտերկրից, ներկայացվում է ձևակերպումից հետո) | ✓ | - | - |
| Տրանսպորտային միջոցի հանձնումը-ընդունումը հաստատող փաստաթուղթը (ավտոսրահից նոր տրանսպորտային միջոցների ձեռք բերման դեպքում) | ✓ | - | - |
| Այլ փաստաթղթեր՝ըստ անհրաժեշտության | ✓ | ✓ | ✓ |

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝

Տեղեկացնում ենք, որ

- եթե վարկառուն չկատարի պարտավորությունները, ապա Դուք եք վճարելու իր փոխարեն, վատանալու է Ձեր վարկային պատմությունը և զրկվելու եք Ձեր գույքից,
- Ձեզ տրամադրվելու է վարկային, երաշխավորության պայմանագրերի և մարման գրաֆիկի օրինակ,
- Հաղորդակցումն իրականացվելու է Ձեր կողմից ընտրված եղանակով,
- 7 օր առաջ ծանուցվելու եք պայմանագրի պայմանների փոփոխության մասին,
- 1 օր առաջ հիշեցում է ուղարկվելու առկա պարտավորության վերաբերյալ,
- Վարկի մարման ուշացման դեպքում՝ ամենաուշը մեկ օր հետո, Ձեզ տեղեկացնելու են այդ մասին:

## ԵՐԱՇԽԱՎՈՐՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝

- Ցանկացած ժամանակ վարկատուից պահանջել տեղեկատվություն վարկի մնացորդի չափի մասին,

- Վարկառուից հետ ստանալու Ձեր կողմից վարկի համար վճարած գումարները, ինչպես նաև վարկառուի փոխարեն կրած այլ վնասները:

**Քաղվածքների, դրանց կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները, ժամկետները և սակագները համաձայն Բանկում գործող ծառայությունների սակագների:**

**ԶԳՈՒՇԱՑՈՒՄ**

**ՁԵՐ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ՉԿԱՏԱՐԵՔ ԿԱՄ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԱՏԱՐԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:**

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՁԵԶ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳԾՈՎ ԲՈԼՈՐ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԻՆ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ԱՅՍՏԵՂ:**

**Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի բանաձև.**

**Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հետևյալ բանաձևը.**

$$A = \sum_{n-1}^{N} \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝
i - տարեկան փաստացի տոկոսադրույքը (APR).
A –տրամադրվող վարկի սկզբնական գումարն է.
n –վարկի մարմանն ուղղված վճարի թիվը.
N -վարկի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը.
Kn-վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի գումարը.
Dn-վարկի տրամադրման օրից մինչև վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով.
i -ն՝ տարեկան փաստացի տոկոսադրույքը, կարող է հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները հայտնի են վարկավորման պայմանագրից կամ այլ կերպ:
Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման համար կարող եք օգտվել Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման հաշվիչից http://www.armbusinessbank.am/am/page/Crediting հղումով:

**Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման օրինակ**.
Համագործակցության պայմանագրերի շրջանակներում և շրջանակներից դուրս ավտոսրահներից Նոր տրանսպորտային միջոցի ձեռք բերման վարկավորման դեպքում

1. Համագործակցության պայմանագրերի շրջանակներում ավտոսրահներից Նոր Ճապոնական արտադրության տրանսպորտային միջոցի ձեռք բերման վարկավորման դեպքում.

- վարկի գումար- 10,000,000 ՀՀ դրամ

- վարկի ժամկետ – 60 ամիս
- վարկի տոկոսադրույք -15%
- վարկային հայտի ուսումնասիրության միանվագ միջնորդավճար- 5,000 ՀՀ դրամ
- վարկի սպասարկման միանվագ միջնորդավճար- վարկի պայմանագրային գումարի 3%
- վարկի սպասարկման ամսական միջնորդավճար- 0%
- տրանսպորտային միջոցի ապահովագրություն- 2,5%
- գրավի իրավունքի գրանցման վճար – 8,000 ՀՀ դրամ
- բանկային հաշվի բացման վճար – 1,500 ՀՀ դրամ
- վարկի և տոկոսագումարների մարման եղանակ – վարկի գումարի ամենամսյա հավասարաչափ մարում և հաշվեգրված տոկոսների ամենամսյա մարում

**Տարեկան փաստացի տոկոսադրույքը կազմում է** 19.1 %

Պայմանավորված վարկի գումարով, ժամկետով, մարումների հաճախականությամբ և այլ օժանդակ ծառայությունների արժեքի փոփոխություններով՝ վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը կարող է տարբեր լինել վերոնշյալ օրինակից:

**ՎԱՐԿԱՌՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԻՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ԶԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:**

**«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն սպառողական վարկային հայտի վերաբերյալ դրական որոշում կայացնելուց հետո, նախքան սպառողական վարկային պայմանագրի կնքումը տրամադրում է ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ՝ համաձայն ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից հաստատված «Ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի կանոնները» կանոնակարգ 8/05-ի:**

**ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԻՍ ՎԱՐԿԱՏՈՒՆ ՁԵԶ, ԵՐԱՇԽԱՎՈՐ(ՆԵՐ)ԻՆ (ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ) ԿՏՐԱՄԱԴՐԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՁԵԶ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:**

**՛՛Ձեր ֆինանսական տեղեկատուն՛՛ համակարգին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով՝ www.fininfo.am:**

**"ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ" ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:**

**Բանկի վերաբերյալ տվյալներ.**

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» Փակ Բաժնետիրական Ընկերություն
Հասցե՝ 0010, ՀՀ, ք.Երևան,Նալբանդյան 48, Հեռ.՝ (+37410) 59-20-20, (+37460) 37-25-00, ֆաքս՝ +37410 59 20 64
Ինտերնետային կայք՝ www.armbusinessbank.am, Էլ. Փոստ՝ info@armbusinessbank.am
Գրանցման վկայական՝ թիվ 0176, տրված 10.12.1991թ., Բանկային գործունեության լիցենզիա՝ թիվ 40, տրված 10.12.1991թ.
Ծառայությունների ցանկը, որը Բանկը իրավունք ունի մատուցել՝ համաձայն "Բանկերի և բանկային գործունեության մասին" ՀՀ օրենքի Գլուխ 4-ի: